Տ. ԱՐՏԱԿ ԱԲԵՂԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Ծնվել է 1971 թ. ապրիլի 12-ին Արտաշատ քաղաքում:

1978—1988 թթ. սովորել է տեղի ռուսական միջնակարգ դպրոցում:

1988 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1994 թ. մայիսի 26-ին պաշտպանել է ավարտական՝ «Խաչվերացի տոնի ավանդությունները» թեմայով, և արժանացել ԼԱՎ գնահատականի:

1994—1995 թթ. աշխատել է Ալեք և Մարի Մանուկյան «Գանձատուն» թանգարանում որպես պատասխանատու տնօրեն:

Այժմ աշխատում է Վեհարանում որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձական քարտուղար և գավազանակիր: